



## ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

---

### ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

16 հոկտեմբերի 2019 թվականի

քաղաք Մինսկ

Եվրասիական տնտեսական միության դատարանի մեծ կոլեգիան, հետեյալ կազմով՝

Նախագահող դատավոր՝ Ժ.Ն. Բաիշեւ,

զեկուցող դատավոր՝ Ա.Ա. Ֆեդորցով,

դատավորներ՝ Ա.Ս. Աժիբբաիմովա, Է.Վ. Հայրիյան, Դ.Գ. Կոլոս, Տ.Ն. Նեշատաեւա, Վ.Խ. Սեյտիմովա, Գ.Ա. Սկրիպկինա, Ա.Է. Թումանյան, Կ.Լ. Չայկա,

քարտուղարությամբ՝ դատական նիստի քարտուղար Յա.Վ. Բուդնիկի,

ուսումնասիրելով գործի նյութերը, լսելով զեկուցող դատավորին,

ղեկավարվելով Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի 46-րդ, 47-րդ, 50-րդ, 68-րդ, 69-րդ, 73-րդ եւ 96-րդ կետերով, Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգի 72-րդ եւ 85-րդ հոդվածներով,

տրամադրում է սույն խորհրդատվական եզրակացությունը՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի դրույթները պարզաբանելու մասին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի դիմումի համաձայն:

## I. Դիմողի կողմից ներկայացված հարցը

Եվրասիական տնտեսական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով, ԵՏՀ) դիմել է Եվրասիական տնտեսական միության դատարան (այսուհետ՝ Դատարան)՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) դրույթները պարզաբանելու դիմումով:

Դիմումի մեջ նշված է, որ ԵՏՀ-ի աշխատանքային պրակտիկայում առաջանում են հարցեր «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի (Պայմանագրի թիվ 1 հավելված, այսուհետ՝ Հիմնադրույթ) 30-րդ կետի կիրառման առնչությամբ՝ Հանձնաժողովի կոլեգիայի որոշումն ուժի մեջ մտնելը կասեցնելու մասով այն դեպքում, երբ տվյալ կետին համապատասխան՝ Հանձնաժողովի կողմից ստացվում է Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն, ԵԱՏՄ) անդամ պետության կառավարության ղեկավարի՝ նշված որոշումը վերացնելու կամ դրանում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկով դիմումը:

Դիմողը խնդրում է Դատարանին տրամադրել խորհրդատվական եզրակացություն հետևյալ հարցի վերաբերյալ. արդյոք Պայմանագրի 3-րդ հոդվածի, 16-րդ հոդվածի 7-րդ կետի եւ Հիմնադրույթի 30-րդ կետի նորմերի փոխկապակցված մեկնաբանությունից հետևում է, որ անդամ պետության կառավարության ղեկավարի՝ Հանձնաժողովի կոլեգիայի որոշումը վերացնելու կամ դրանում փոփոխություններ կատարելու առաջարկով Հիմնադրույթի 30-րդ կետի չորրորդ պարբերությամբ սահմանված երեսնօրյա ժամկետում դիմելու իրավունքի ծագումը, որը հանգեցնում է մինչեւ Եվրասիական միջկառավարական խորհրդի (այսուհետ՝ Միջկառավարական խորհուրդ) նիստին համապատասխան հարցն ուսումնասիրելն այդ որոշումն ուժի մեջ մտնելու կասեցմանը, բացարձակ է, թե այդ իրավունքը պայմանական բնույթ է կրում, եւ դրա ծագումը սահմանափակված է Հիմնադրույթի 30-րդ կետի առաջին, երրորդ եւ չորրորդ պարբերությունների դրույթներով:

## **II. Դատարանի իրավասությունը**

Հանձնաժողովի դիմումի մեջ առաջադրված հարցի ուսումնասիրումը Դատարանի մեծ կոլեգիայի՝ 2019 թվականի հունիսի 3-ի որոշմամբ ճանաչվել է Դատարանի իրավասությանը համապատասխանող, եւ դիմումն ընդունվել է վարույթ:

Հանձնաժողովի կողմից առաջադրված՝ Պայմանագրի 3-րդ եւ 16-րդ հոդվածներում, Հիմնադրույթի 30-րդ կետում շարադրված նորմերի փոխկապակցված մեկնաբանման եւ ճիշտ կիրառման հարցի պարզաբանման մասով Դատարանի իրավասությունը հաստատվել է պարզաբանման մասին դիմումի ուսումնասիրման եւ սույն խորհրդատվական եզրակացության նախապատրաստման ընթացքում:

Պայմանագրի՝ Հանձնաժողովի դիմումի մեջ շարադրված նորմերը վերաբերում են Միության իրավունքին, որի պարզաբանումը, Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի (Պայմանագրի թիվ 2 հավելված, այսուհետ՝ Ստատուտ) 46-րդ կետին համապատասխան, Դատարանի իրավասության շրջանակներում է: Հանձնաժողովը դասվում է այն մարմիններին, որոնք իրավասու են դիմելու Դատարան պարզաբանման մասին դիմումով:

## **III. Ընթացակարգը Դատարանում**

Հանձնաժողովի կողմից առաջադրված հարցերի առավել ամբողջական պարզաբանման նպատակով, ինչպես նաեւ Դատարանի կողմից Միության իրավունքի ճիշտ եւ միատեսակ մեկնաբանման եւ կիրառման նպատակով գործն ուսումնասիրման համար նախապատրաստելու շրջանակներում հարցումներ են ուղարկվել Հանձնաժողով, անդամ պետությունների արդարադատության նախարարություններ, գիտական եւ կրթական հաստատություններ:

Ինտեգրացիոն իրավունքին առնչվող առաջադրված հարցերի վերաբերյալ կարծիքներ են արտահայտել Հայաստանի Հանրապետության, Բելառուսի

Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարարությունները, Բելառուսի Հանրապետության օրենսդրության եւ իրավական հետազոտությունների ազգային կենտրոնի, Ղազախստանի Հանրապետության օրենսդրության եւ իրավական տեղեկատվության ինստիտուտի, Ռուսաստանի Դաշնության կառավարությանը կից օրենսդրության եւ համեմատական իրավագիտության ինստիտուտի, Բելառուսի պետական համալսարանի, Ղազախստանի ալ-Ֆարաբի անվան ազգային համալսարանի, Օ.Ե. Կուտաֆինի անվան Մոսկվայի պետական իրավաբանական համալսարանի, ԵԱՏՄ միջխորհրդարանական վեհաժողովին կից համալսարանի մասնագետները: Դատարանն ուսումնասիրել է վերլուծվող նորմերի՝ Հանձնաժողովի կողմից կիրառման պրակտիկան:

#### **IV. Դատարանի եզրահանգումները**

Ղեկավարվելով Ստատուտի 50-րդ կետով՝ Դատարանի մեծ կոլեգիան Պայմանագրի դրույթները պարզաբանում է դրանց համակարգային փոխկապվածության մեջ՝ հիմք ընդունելով միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներն ու նորմերը, այդ թվում՝ «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969 թվականի մայիսի 23-ի Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի դրույթները, որի համաձայն պայմանագիրը պետք է մեկնաբանվի բարեխղճորեն՝ միջազգային պայմանագրի եզրույթների՝ դրանց համատեքստում ունեցած սովորական նշանակությանը համապատասխան, ինչպես նաև պայմանագրի առարկայի եւ նպատակների լույսի ներքո:

1. Պայմանագրի 3-րդ հոդվածը սահմանում է Միության գործունեության հիմնական սկզբունքները:

Միության գործունեության հիմնական սկզբունքներն իրագործվում են դրա մարմինների կազմակերպմամբ եւ գործունեությամբ, այդ թվում՝ Միության մարմինների կողմից որոշումներ ընդունելու ու որոշումների գործողության ընթացքում:

ԵԱՏՄ-ի բոլոր մասնակիցների պատշաճ հավասարությունը, դրանց միջև համագործակցությունն ապահովելու համար կարող է անհրաժեշտություն առաջանալ անդամ պետության առաջարկով, Հիմնադրույթի 30-րդ կետին, Պայմանագրի 12-րդ եւ 16-րդ հոդվածներին համապատասխան, Միջկառավարական խորհրդի եւ (կամ) Եվրասիական տնտեսական Բարձրագույն խորհրդի (այսուհետ՝ Բարձրագույն խորհուրդ) մակարդակով ուսումնասիրելու Հանձնաժողովի՝ ինչպես ուժի մեջ մտած, այնպես էլ ուժի մեջ չմտած որոշումները: Սահմանված մեխանիզմները երաշխավորում են Հանձնաժողովի որոշումը վերացնելու կամ այն փոփոխելու, ուժի մեջ մտնելը կասեցնելու կամ գործողությունը կասեցնելու հնարավորություն:

2. Պայմանագրի 8-րդ հոդվածը սահմանում է Միության ինստիտուցիոնալ համակարգը, որի կազմի մեջ մտնում են Բարձրագույն խորհուրդը եւ Միջկառավարական խորհուրդը, Հանձնաժողովը եւ Դատարանը՝ տվյալ հոդվածի 1-ին կետին համապատասխան: Տվյալ հոդվածի 2-րդ կետով նախատեսված է, որ Միության մարմինները գործում են այն լիազորությունների շրջանակներում, որոնք նրանց տրամադրվել են Պայմանագրով եւ Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերով:

Պայմանագրի 10-րդ եւ 12-րդ հոդվածներին համապատասխան՝ Միության Բարձրագույն մարմինը Բարձրագույն խորհուրդն է, որն ուսումնասիրում է Միության գործունեությանն առնչվող սկզբունքային հարցերը, սահմանում է ինտեգրացիայի զարգացման ռազմավարությունը, ուղղություններն ու հեռանկարները եւ ընդունում Միության նպատակների իրագործմանն ուղղված որոշումներ:

Միջկառավարական խորհուրդը Միության մարմինն է, որն ապահովում է Պայմանագրի, Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերի եւ Բարձրագույն խորհրդի որոշումների իրականացման ու կատարման նկատմամբ հսկողությունը, իրականացնում է Պայմանագրի 16-րդ հոդվածով սահմանված մի շարք այլ գործառույթներ:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովը, Պայմանագրի 18-րդ հոդվածին համապատասխան, Միության մշտապես գործող կարգավորող մարմինն է: Հանձնաժողովը կազմված է Խորհրդից ու Կոլեգիայից:

Հանձնաժողովի խորհուրդն իրականացնում է Միությունում ինտեգրացիոն գործընթացների ընդհանուր կարգավորումը, ինչպես նաև Հանձնաժողովի գործունեության ընդհանուր ղեկավարումը (Հիմնադրույթի 22-րդ կետ):

Հիմնադրույթի 31-րդ կետին համապատասխան՝ Հանձնաժողովի կոլեգիան Հանձնաժողովի գործադիր մարմինն է:

Հանձնաժողովի կարգավորող ազդեցությունն իրագործվում է գլխավորապես որոշումներ, կարգադրություններ եւ հանձնարարականներ ընդունելու միջոցով:

Հիմնադրույթի 14-րդ կետին համապատասխան՝ Հանձնաժողովի որոշումները, կարգադրությունները եւ հանձնարարականները Հանձնաժողովի խորհրդի եւ Հանձնաժողովի կոլեգիայի կողմից ընդունվում են Պայմանագրով ու Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերով սահմանված լիազորությունների շրջանակներում եւ Պայմանագրով ու Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգով (այսուհետ՝ Կանոնակարգ) նախատեսված կարգով:

Հիմնադրույթի 11-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի խորհրդի եւ Հանձնաժողովի կոլեգիայի գործունեության կարգը սահմանվում է Կանոնակարգով:

Կանոնակարգի 31-րդ կետը սահմանում է, որ Հանձնաժողովի խորհուրդն ուսումնասիրում է դրա իրավասությանը վերապահված հարցեր՝ թիվ 1 հավելվածի համաձայն, ինչպես նաև Պայմանագրին եւ Կանոնակարգի II-VI բաժինների դրույթներին համապատասխան:

3. Պայմանագրի 12-րդ հոդվածի 2-րդ կետի 8-րդ ենթակետին համապատասխան՝ Բարձրագույն խորհրդի լիազորություններից մեկն է անդամ

պետությունների առաջարկով Միջկառավարական խորհրդի կամ Հանձնաժողովի՝ Պայմանագրի 16-րդ հոդվածի 7-րդ կետի դրույթները հաշվի առնելով ընդունած որոշումները վերացնելուն կամ փոփոխելուն վերաբերող հարցերի ուսումնասիրումը:

Պայմանագրի 16-րդ հոդվածի 7-րդ կետը Միջկառավարական խորհրդի լիազորություններին է դասում անդամ պետության առաջարկով Հանձնաժողովի ընդունած որոշումների վերացմանը կամ փոփոխմանն առնչվող հարցերի ուսումնասիրումը կամ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ դրանք Բարձրագույն խորհրդի ուսումնասիրմանը ներկայացնելը: Պայմանագրի նույն հոդվածի 8-րդ կետը Միջկառավարական խորհրդին Հանձնաժողովի խորհրդի եւ կոլեգիայի որոշումների գործողության կասեցման վերաբերյալ որոշումներ ընդունելու իրավունք է վերապահում:

Հիմնադրույթի 30-րդ կետը եւ Կանոնակարգի IV բաժինը կարգավորում են անդամ պետությունների, Խորհրդի անդամների դիմումի հիման վրա Կոլեգիայի կողմից ընդունված՝ Հանձնաժողովի որոշումների վերացմանը կամ դրանցում փոփոխությունների կատարմանն առնչվող հարցերը: Հիմնադրույթի 30-րդ կետը ներառված է II բաժնում՝ «Հանձնաժողովի խորհուրդը», ինչը ենթադրում է դրա ուսումնասիրումն ու մեկնաբանումը՝ Հանձնաժողովի խորհրդի լիազորությունների, գործառույթների եւ ընթացակարգերի լույսի ներքո:

Դատարանի մեծ կոլեգիան համարում է, որ Պայմանագրի 12-րդ, 16-րդ հոդվածների եւ Հիմնադրույթի 30-րդ կետի նորմերը ԵՍՏՄ մարմինների որոշումների բողոքարկման տարբեր ձևեր սահմանելիս փոխկապակցված են:

Պայմանագրի 12-րդ հոդվածի 2-րդ կետի 8-րդ ենթակետը, 16-րդ հոդվածի 7-րդ կետն անդամ պետությանն իրավունք են վերապահում Բարձրագույն խորհրդի եւ Միջկառավարական խորհրդի ուսումնասիրմանը ներկայացնել հարցեր, որոնք վերաբերում են Հանձնաժողովի որոշումը վերացնելուն կամ փոփոխելուն:

Այդ առաջարկները ենթակա են ուսումնասիրման եւ դրանց համաձայն կարող է վերացնելու կամ փոփոխելու մասին որոշում կայացվել՝ Բարձրագույն

խորհրդի եւ Միջկառավարական խորհրդի աշխատանքի ընդհանուր կանոններին (Պայմանագրի 11-րդ եւ 15-րդ հոդվածներ, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 89 եւ 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 96 որոշումներ) համապատասխան:

Դատարանի մեծ կոլեգիան համարում է, որ Պայմանագրի 16-րդ հոդվածի 7-րդ կետի դրույթների իրագործումը չի հանգեցնում Հանձնաժողովի համապատասխան որոշումների գործողության կասեցում: Այդպիսի հետեւանքներ առաջանում են միայն Պայմանագրի 16-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան բողոքարկվող որոշման գործողությունը կասեցնելու մասին Միջկառավարական խորհրդի կողմից առանձին որոշում ընդունվելու դեպքում:

Պայմանագրի 8-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերի, 12-րդ հոդվածի 2-րդ կետի 8-րդ ենթակետի, 16-րդ հոդվածի 7-րդ եւ 8-րդ կետերի, 18-րդ հոդվածի մեկնաբանությունը վկայում է Միության ինստիտուցիոնալ համակարգի շրջանակներում Հանձնաժողովի խորհրդի կողմից Հանձնաժողովի կոլեգիայի որոշումների վերանայման, ինչպես նաեւ Միջկառավարական խորհուրդ եւ Բարձրագույն խորհուրդ դրանց բողոքարկման հաջորդական ընթացակարգի ստեղծման մասին: Պայմանագրի 8-րդ հոդվածի 2-րդ կետում այն նշումը, որ «Միության մարմինները գործում են այն լիազորությունների շրջանակներում, որոնք նրանց վերապահված են սույն Պայմանագրով եւ Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերով», ոչ միայն Միության մարմիններին տվյալ ակտերով վերապահված լիազորությունների շրջանակներից դուրս գալու արգելք է, այլ նաեւ այն, որ տվյալ լիազորությունների իրագործումը պետք է համաձայնեցվի Միության նպատակների հետ եւ իրականացվի՝ խստորեն պահպանելով Պայմանագրով, Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերով նախատեսված ընթացակարգերը: Միության իրավունքի վերաբերելի դրույթների վերլուծությունը վկայում է, որ Հանձնաժողովի կոլեգիայի եւ խորհրդի որոշումները վերացնելու եւ փոփոխելու՝ Միության բարձրագույն մարմինների լիազորությունների իրականացման կարգը կանոնակարգող նորմը Հիմնադրույթի 30-րդ կետն է:



Հիմնադրույթի 30-րդ կետը սահմանում է Հանձնաժողովի կոլեգիայի միայն այն որոշումների բողոքարկման հատուկ կարգ, որոնք ուժի մեջ չեն մտել: Ընդ որում, Հիմնադրույթի նշված կետով սահմանված՝ ուժի մեջ չմտած որոշման բողոքարկման ընթացակարգը չի նախատեսում Հանձնաժողովի կոլեգիայի համապատասխան որոշումն ուժի մեջ չմտնելու եւ կասեցնելու մասին առանձին որոշման ընդունում:

Հիմնադրույթի 30-րդ կետի վեցերորդ պարբերության տառացի մեկնաբանությունից հետեւում է, որ Հիմնադրույթի 30-րդ կետի կարգով Հանձնաժողովի կոլեգիայի որոշման մեջ փոփոխություն կատարելու կամ այն վերացնելու մասին առաջարկն ինքնուրույն իրավաբանական փաստ է, որի հետ կապված է այդ որոշումն ուժի մեջ մտնելու կասեցումը, եւ որի համար չի պահանջվում առանձին որոշման ընդունում:

Դատարանի մեծ կոլեգիան անհրաժեշտ է համարում ուշադրությունը սեւեռել այն ակտի առանձնահատկություններին, որի վերանայումը հնարավոր է Միջկառավարական եւ (կամ) Բարձրագույն խորհուրդ դիմելու կարգով:

Պայմանագրի 12-րդ հոդվածի 2-րդ կետի 8-րդ ենթակետից, 16-րդ հոդվածի 7-րդ կետից եւ Հիմնադրույթի 30-րդ կետից հետեւում է, որ Միջկառավարական խորհրդին եւ Բարձրագույն խորհրդին կարող է առաջադրվել հարց՝ Հանձնաժողովի որոշումը վերացնելու մասին, ինչը դրա գործողությունը կասեցնելու հիմք է:

Պայմանագրի 2-րդ հոդվածին համապատասխան՝ որոշումը Միության մարմինների կողմից ընդունվող, նորմատիվ իրավական բնույթի դրույթներ պարունակող ակտ է: Հիմնադրույթի 13-րդ կետի ուժով Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակներում ընդունում է նորմատիվ իրավական բնույթ ունեցող եւ անդամ պետությունների համար պարտադիր որոշումներ: Իրավական ակտի նորմատիվային բնույթը դրսևորվում է դրա բազմակի կիրառման հնարավորությամբ եւ անորոշ շրջանակի անձանց նկատմամբ կարգավորող ազդեցության ուղղվածությամբ:

4. Հիմնադրույթի 30-րդ կետի առաջին պարբերությանը համապատասխան՝ անդամ պետությունը կամ Հանձնաժողովի խորհրդի անդամն իրավունք ունի Հանձնաժողովի կոլեգիայի որոշումը հրապարակվելու օրվանից 15 օրացուցային օրվա ընթացքում այն վերացնելու կամ դրանում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկ ներկայացնելու Հանձնաժողովի կոլեգիա:

Հիմնադրույթի 30-րդ կետի առաջին պարբերությամբ սահմանված ժամկետը, Դատարանի մեծ կոլեգիայի կարծիքով, կանխարգելիչ բնույթ ունի: Պայմանագիրը թույլ չի տալիս Հանձնաժողովի կոլեգիայի որոշումը վերացնելու կամ դրանում փոփոխություններ կատարելու մասին առաջարկների ներկայացումը Հիմնադրույթի 30-րդ հոդվածի առաջին պարբերությամբ սահմանված ժամանակային շրջանակներից դուրս: Բացի այդ, այդպիսի առաջարկ ներկայացնելու համար ժամկետի կասեցում կամ ժամկետի երկարաձգում Պայմանագրով չի նախատեսվում:

Ընդ որում, Դատարանի մեծ կոլեգիան ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ Հիմնադրույթի 30-րդ կետի առաջին պարբերության մեջ նշված ժամկետը զգալիորեն քիչ է 30-օրյա ժամկետից, որը սահմանված է Հիմնադրույթի 16-րդ կետի առաջին պարբերությամբ, համաձայն որի՝ Հանձնաժողովի որոշումներն ուժի մեջ են մտնում ոչ շուտ, քան դրանց պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով եւ Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերով:

Միության իրավունքով տարբերակվում են ուժի մեջ մտնելու ընդհանուր ժամկետով (Հիմնադրույթի 16-րդ կետի առաջին պարբերություն) եւ ուժի մեջ մտնելու կրճատ ժամկետով (Հիմնադրույթի 16-րդ կետի երկրորդ պարբերություն) Հանձնաժողովի կոլեգիայի որոշումներ:

Հիմնադրույթի 16-րդ կետի երկրորդ պարբերության համաձայն՝ առանձին դեպքերում կարող է նախատեսվել Հանձնաժողովի որոշումներն ուժի մեջ մտնելու այլ ժամկետ, սակայն ոչ շուտ, քան դրանց պաշտոնական հրապարակման օրվանից 10 օրացուցային օր հետո:

Ուժի մեջ մտնելու կրճատ ժամկետներ Հանձնաժողովի կողմից կարող են սահմանվել այն որոշումների առնչությամբ, որոնք նշված են Հիմնադրույթի 18-րդ կետում (այն որոշումները, որոնցով բարելավվում է ֆիզիկական եւ (կամ) իրավաբանական անձանց կարգավիճակը), եւ այն որոշումների առնչությամբ, որոնք ընդունվում են օպերատիվ արձագանք պահանջող բացառիկ դեպքերում:

5. Հիմնադրույթի 30-րդ կետի չորրորդ պարբերությանը համապատասխան՝ Հանձնաժողովի կոլեգիայի որոշումը վերացնելու կամ դրանում փոփոխություններ կատարելու վերաբերյալ հարցի ուսումնասիրման արդյունքներով Հանձնաժողովի խորհրդի կողմից կայացված՝ ուժի մեջ չմտած որոշման հետ չհամաձայնելու դեպքում կամ տվյալ կետի երրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետն ավարտվելու դեպքում, սակայն ոչ ուշ, քան Հանձնաժողովի խորհրդի որոշման պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օր հետո անդամ պետությունը կարող է կառավարության ղեկավարի ստորագրությամբ գրություն ուղարկել Հանձնաժողով՝ համապատասխան հարցը Միջկառավարական խորհրդի եւ (կամ) Բարձրագույն խորհրդի ուսումնասիրմանը ներկայացնելու մասին առաջարկով:

Հիմնադրույթի 30-րդ կետի շրջանակներում Հանձնաժողովի՝ ուժի մեջ չմտած որոշումը բողոքարկելու՝ անդամ պետության կողմից իր իրավունքի իրագործումը նախատեսում է մի շարք պարտադիր պայմանների կատարում:

Համապատասխան հարցը Միջկառավարական խորհրդի եւ (կամ) Բարձրագույն խորհրդի ուսումնասիրմանը ներկայացնելու մասին առաջարկով անդամ պետությունը կարող է դիմել Հանձնաժողով միայն այն դեպքերում, երբ՝

- պետությունը համաձայն չէ Հանձնաժողովի կոլեգիայի որոշումը վերացնելու կամ դրանում փոփոխություններ կատարելու մասին հարցի ուսումնասիրման արդյունքների մասով Հանձնաժողովի խորհրդի կողմից ընդունված որոշման հետ, կամ

- Հանձնաժողովի խորհուրդը Հիմնադրույթի 30-րդ կետի երրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետի ընթացքում՝ համապատասխան

որոշման մասով նյութերը ստանալուց հետո՝ 10 օրացուցային օրվա ընթացքում, նշված հարցի ուսումնասիրման արդյունքներով որոշում չի ընդունել:

Դատարանի մեծ կոլեգիան ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ Հիմնադրույթի 30-րդ կետի չորրորդ պարբերությանը համապատասխան՝ հարցը Միջկառավարական խորհրդի եւ (կամ) Բարձրագույն խորհրդի ուսումնասիրմանը ներկայացնելու մասին առաջարկով հանդես գալու՝ կառավարության ղեկավարի իրավունքը պայմանավորված է Հանձնաժողովի կոլեգիայի որոշումը Հանձնաժողովի խորհուրդ բողոքարկելու պարտադիր փաստի առկայությամբ: Ընդ որում, այդ ձևով դիմելու հնարավորությունը սահմանափակված է 15-օրյա ժամկետով՝ հաշվված Կոլեգիայի բողոքարկվող որոշման հրապարակման օրվանից:

Հիմնադրույթի 30-րդ կետի չորրորդ պարբերության տառացի մեկնաբանությունը չի նախատեսում կառավարության ղեկավարի՝ հարցը Միջկառավարական խորհրդի եւ (կամ) Բարձրագույն խորհրդի ուսումնասիրմանը ներկայացնելու մասին առաջարկով հանդես գալու հնարավորություն՝ առանց անդամ պետության կամ Խորհրդի անդամի՝ համապատասխան դիմումով Հանձնաժողովի կոլեգիա նախապես դիմելու:

Հիմնադրույթի 30-րդ կետի չորրորդ պարբերության նորմերը չեն կարող իրագործվել տվյալ կետի նախորդ պարբերությունների կատարումից անկախ:

Ընդ որում, Հիմնադրույթի 30-րդ կետի առաջին պարբերության կանոնների կատարումը, այսինքն՝ Հանձնաժողովի կոլեգիայի որոշումը վերացնելու կամ դրանում փոփոխություններ կատարելու մասին առաջարկը սահմանված ժամկետում լիազորված սուբյեկտի կողմից ներկայացնելը Հիմնադրույթի 30-րդ կետով նախատեսված ամբողջ մեխանիզմի կիրառման առաջնային պայմանն է, ներառյալ՝ տվյալ կետի չորրորդ պարբերությունը:

6. Առանց Հանձնաժողովի կոլեգիայի որոշման նախնական բողոքարկման՝ կառավարության ղեկավարը կարող է դիմել Հիմնադրույթի 30-րդ կետի հինգերորդ պարբերությանը համապատասխան այն վերացնելու կամ փոփոխելու մասին դիմումով՝ որոշումների երկու կատեգորիաների մասով՝

- այն որոշումների, որոնցով բարելավվում է ֆիզիկական եւ (կամ) իրավաբանական անձանց կարգավիճակը.

- այն որոշումների, որոնք ընդունվում են օպերատիվ արձագանք պահանջող բացառիկ դեպքերում:

Տվյալ կատեգորիաների որոշումների մասով անդամ պետության կառավարության ղեկավարն իրավունք ունի հարցը Միջկառավարական խորհրդի եւ (կամ) Բարձրագույն խորհրդի ուսումնասիրմանը ներկայացնելու մասին առաջարկով դիմելու Հանձնաժողով ցանկացած փուլում՝ մինչեւ դրանց ուժի մեջ մտնելու օրը:

Հիմնադրույթի 30-րդ կետի առաջինից չորրորդ պարբերությունների պահանջների պարտադիր կատարումը որոշումների տվյալ կատեգորիաների մասով նախատեսված չէ:

7. Հիմնադրույթի 30-րդ կետի առաջինից հինգերորդ պարբերությունների կարգադրություններն ուղղակիորեն փոխկապակցված են վեցերորդ պարբերության նորմերի հետ, որից հետեւում է, որ Հանձնաժողովի կոլեգիայի որոշումը, որի առնչությամբ սույն կետին համապատասխան ներկայացվել է այն վերացնելու կամ դրանում փոփոխություններ կատարելու մասին առաջարկ, ուժի մեջ չի մտնում եւ կասեցվում է Միջկառավարական խորհրդի եւ (կամ) Բարձրագույն խորհրդի կողմից հարցն ուսումնասիրելու եւ այդ ուսումնասիրման արդյունքներով համապատասխան որոշում կայացնելու համար անհրաժեշտ ժամկետով:

Հիմնադրույթի 30-րդ կետի վեցերորդ պարբերությունից հետեւում է, որ Հանձնաժողովի կոլեգիայի որոշումն ուժի մեջ չմտնելու եւ այն կասեցնելու համար հիմք է այդ որոշման առնչությամբ «սույն կետին համապատասխան՝ վերացնելու կամ դրանում փոփոխություններ կատարելու մասին» առաջարկ ներկայացնելը, որով նախատեսվում է սույն խորհրդատվական եզրակացության 5-րդ կետով սահմանված կարգի պահպանում (Հանձնաժողովի կոլեգիայի որոշումը վերացնելու կամ դրանում փոփոխություններ կատարելու մասին նախնական առաջարկը 15 օրացուցային օրվա ընթացքում անդամ պետության կամ

Հանձնաժողովի խորհրդի անդամի կողմից ներկայացնելը, Հանձնաժողովի խորհրդի կողմից նյութերի ուսումնասիրումը, Խորհրդի որոշման հետ անհամաձայնության կամ Հանձնաժողովի խորհրդի կողմից որոշում չընդունելու դեպքերում կառավարության ղեկավարի ստորագրությամբ գրություն ուղարկելը):

Դատարանի մեծ կոլեգիան համարում է, որ Հիմնադրույթի 30-րդ կետը նախատեսում է Հանձնաժողովի կոլեգիայի որոշումն ուժի մեջ չմտնելը եւ այն կասեցնելը՝ Հանձնաժողովի կոլեգիայի որոշումը վերացնելու կամ դրանում փոփոխություններ կատարելու մասին հարցը Միջկառավարական խորհրդի եւ (կամ) Բարձրագույն խորհրդի ուսումնասիրմանը ներկայացնելու առաջարկով, կառավարության ղեկավարի ստորագրությամբ գրությունով անդամ պետության կողմից Հանձնաժողով դիմելու հիման վրա այն դեպքերում, երբ՝

1 - Հանձնաժողովի կոլեգիայի որոշումը հրապարակելու օրվանից հետո՝ 15 օրացուցային օրվա ընթացքում, Հանձնաժողովի կոլեգիա դրա վերացման կամ դրանում փոփոխությունների կատարման վերաբերյալ առաջարկ ներկայացնելուց հետո՝

ա) անդամ պետությունը համաձայն չէ Հանձնաժողովի կոլեգիայի որոշումը վերացնելու կամ դրանում փոփոխություններ կատարելու մասին հարցի ուսումնասիրման արդյունքների մասով Հանձնաժողովի խորհրդի կողմից ընդունված որոշման հետ, կամ

բ) Հանձնաժողովի խորհուրդը 10 օրացուցային օրվա ընթացքում համապատասխան որոշում չի ընդունել (չի ուսումնասիրել Հանձնաժողովի կոլեգիայի որոշումը վերացնելու կամ դրանում փոփոխություններ կատարելու մասին հարցը).

2 - առաջարկը վերաբերում է Հանձնաժողովի այն որոշումներին, որոնք նշված են Հիմնադրույթի 16-րդ կետի երկրորդ պարբերությունում:

Այլ դեպքերում անդամ պետության կառավարության ղեկավարի՝ Հիմնադրույթի 30-րդ կետի շրջանակներում Հանձնաժողովի կոլեգիայի որոշումը վերացնելու կամ դրանում փոփոխություններ կատարելու մասին հարցը

Միջկառավարական խորհրդի եւ (կամ) բարձրագույն խորհրդի ուսումնասիրմանը ներկայացնելու մասին առաջարկով դիմելը չի հանգեցնում Հանձնաժողովի կոլեգիայի որոշումն ուժի մեջ չմտնելուն եւ կասեցնելուն:

Վերոշարադրյալի հիման վրա՝ Դատարանի մեծ կոլեգիան գալիս է հետեւյալ եզրահանգման.

Անդամ պետության կառավարության ղեկավարի՝ Հիմնադրույթի 30-րդ կետի չորրորդ պարբերությամբ սահմանված 30-օրյա ժամկետում Հանձնաժողովի կոլեգիայի որոշումը վերացնելու կամ դրանում փոփոխություններ կատարելու մասին այնպիսի առաջարկով դիմելու իրավունքը, որը հանգեցնում է այդ որոշումն ուժի մեջ մտնելու կասեցմանը՝ մինչեւ Միջկառավարական խորհրդի նիստին համապատասխան հարցն ուսումնասիրելը, ծագում է Հիմնադրույթի 30-րդ կետի առաջինից երրորդ պարբերություններով նախատեսված կարգով Հանձնաժողովի դիմելու պայմանի դեպքում:

## V. Եզրափակիչ դրույթները

Սույն խորհրդատվական եզրակացության պատճենն ուղարկել դիմողին:

Խորհրդատվական եզրակացությունը տեղադրել Դատարանի պաշտոնական ինտերնետային կայքում:

Նախագահող՝	Ժ.Ն. Բախշեւ
Դատավորներ՝	Ա.Մ. Աժիբրաիմովա
	Է.Վ. Հայրիյան
	Դ.Գ. Կոլոս
	Տ.Ն. Նեշատաեւա
	Վ.Խ. Սեյտիմովա
	Գ.Ա. Սկրիպկինա
	Ա.Է. Թումանյան
	Ա.Ա. Ֆեդորցով
	Կ.Լ. Չայկա